



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

« 18 »

01

ՉՈՇՈՔ

№ 08/111/ - 18

Հունվարի 11-17-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանները ՀՀ-ում

Հունվարի 15-ին շրջանների զգալի մասում, 16-ին՝ առանձին շրջաններում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ամասիայում՝ 23,4մմ, Աշոցքում՝ 22,8մմ, Ստեփանավանում՝ 13մմ, Արագածում՝ 11մմ, մնացած շրջաններում՝ 1-10մմ քանակությամբ: Հունվարի 11-14-ին, 17-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հունվարի 11-ին նորմայից բարձր է եղել 5-10, (Արարատյան դաշտում նորմայից ցածր՝ 2-4 աստիճանով), 12-ին՝ 8-14 (Տավուշում՝ 3-8, Սյունիքի հովիտներում՝ 2-4, իսկ Արարատյան դաշտում՝ նորմայի սահմաններում՝ բացասական շեղումով), 13-ին՝ 7-13 (Արարատյան դաշտում՝ 1-2), 14-ին՝ 8-12 (Արարատյան դաշտում՝ 3-5), 15-16-ին՝ 6-10 (Արարատյան դաշտում՝ 8-11), 17-ին՝ 4-9 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 13-14-ին: Տավուշում, Լոռիում, Սյունիքում գրանցվել է +14...+18°C (Կապանում՝ +23°C), Արարատյան դաշտում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի նախալեռներում՝ +10...+15°C (Արենիում՝ +16°C, Եղվարդում՝ +8°C, Թալինում՝ +7°C), Գեղարքունիքում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում՝ +6...+11°C (Գավառում՝ +12°C, Ամբերդում՝ +5°C), Շիրակում՝ +4...+6 աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 11-ին: Շիրակում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի նախալեռներում գրանցվել է -7...-12°C (Աշոցքում՝ -16°C, Աշտարակում՝ -14°C), Արարատյան դաշտում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում՝ -6...-9°C, Գեղարքունիքում՝ -2...-6°C (Մասրիկում՝ -12°C), Տավուշում, Լոռիում, Սյունիքում՝ -3...+1°C (Սիսիանում՝ -9°C):

Հունվարի 11-12-ին, 14-17-ին առանձին շրջաններում դիտվել է քամի 8-14մ/վ, պողոթյունների ժամանակ՝ 16-22մ/վրկ (Պուշկինի լճում՝ 17-22մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ 26-30մ/վրկ):

Հունվարի 15-ին Գյումրիում և Ծաղկահովիտում դիտվել է ձնաբուր:

Հունվարի 17-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձրլեռնային կայանում 93սմ, Ամասիայում՝ 38սմ, Ամբերդում 36սմ, Անանուն լճ.-ում և Աշոցքում՝ 30սմ, Որոտանի լճ.-ում՝ 29սմ, Ապարան լճայինում՝ 26սմ, Ստեփանավանում՝ 18սմ, Հրազդանում՝ 17սմ, Ապարանում՝ 15սմ, Ջերմուկում՝ 14սմ, մնացած շրջաններում՝ 1-11սմ:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ և կազմել՝ 1900.52մ (17.01.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 10 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան